

Ոնչ էլ խաց կուտի.

Անութի ճանքախ կընկնի:

260. Կգեայ կը խիծնի ձին.

Կը խարցուցի Խլաթ, դիւ դո՞ր իս, կերթայ.

Կերթայ Խլաթ, կը խարցուցի Արճէշ.

Յընդիւց կը խարցուցի.— Բերկրի որ տեղն ի.

Կըսին.— Էդա ճանքախ բռնը՛, գինա:

261. Դաւիթն ի, կըլնը, գեայ Գեօրծոթայ դաշտ.

Կը ախնի էն տե— դաշտը մէջ գետան կէնին.

Դաւիթ շա՛տ կը քեաղցածանայ.

Ճար կը կարուի վերայ, էլ չը գիմանայ.

Մէկ գիւթընիմ մօտ կերթայ.

— Բարյաջողիւմ ձի, գիւթնուլը, կըսի.

— Աստըծու բարին, դիւ խաղար բարեօվ:

262. Կըսի.— Գիւթնճի՛, իս քեաղցած իմ.

Կըսի.— Իս գիւթան չըմ կէրի թուղնը.

Դէ՛, էնա տեղ, արաը կուշտն ի խացիը.

էն տեղն էլ կանանչ շա՛տ կայ.

Ձին թուղ էն տե թը էրեծայ.

Դիւ էլ կուշտ խաց կի. գինա քեօ բանին:

263 Դաւիթ կերթայ արաը կուշտ, ձիուց կէջնի.

Կեամ ձիու բերնէն կը խանի, ձին էն տե կը թուղնի.

Ըզինքն էլ խաց կը քեշի յառէջ, ղխաց յըմեն կուտի:

264. Գիւթնուուրքիւն էլ կէս օրին գիւթան կը թուղնըն.

Գինացըն վուր խաց ուտին.

Գինացըն տիտան վուր ձիաուուր յըմեն խացիը կիւրիը ի.

Յէն տե գիւթնճին կը մնայ շիւար.

Կըսի ընկերուջ.— Իս եօթ աւուր խաց բիւրիը էր.

Էդա մարդ յըմեն կիւրիը ի. փթիւլ չը թուղիը ի.

Գնա՛, կըսի մշկուն, խաց բի:

265. Դաւիթ էն տե կը լսի.

— Գիւթնճի, կըսի, քիւ արտ քեանի՞ գիւթնի տեղ ի:

Կըսի.— Գեառսուն գիւթնի տեղ ի:

Կըսի.— Դիւ գնացէք, ձի խաց կերէք.

Դիւ գնացէք, իս ձի արտ կը վարիմ:

Գիւթան թուղէք էս տեղ:

Գիւթնուուր կառնը ղիւր մարդիը, կերթայ տուն, խաց

ուտի:

266. Դաւիթ զգիւթան կը կապի ձիուն.

Կըլնը կը խիծնայ վար ձիուն.

Կը տանէ գիւթան, կը բերի.